# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## «ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021 թվականին լրացավ ԵԽ-ին Հայաստանի անդամության 20 տարին: Անդամակցության առաջին իսկ տարվանից, Հայաստանը որդեգրել է կազմակերպության տարբեր մարմիններում ակտիվ ներգրավվածության քաղաքականություն: 2013թ. Հայաստանը մեծ հաջողությամբ վարել է ԵԽ նախարարների կոմիտեում իր նախագահությունը: Անդամակցությամբ ստանձնած պարտավորությունների հետևողական կատարման արդյունքում, ԵԽ Նախարարների կոմիտեն փուլերով մեղմացրել է Հայաստանի հատուկ պարտավորությունների կատարման նկատմամբ քաղաքական մոնիտորինգը, իսկ 2021թ. մայիսի 21-ին կայացած ԵԽ Նախարարական նստաշրջանում առհասարակ վերացրել է այն: ԵԽԽՎ-ում վերջին անգամ Հայաստանի պարտավորությունների կատարմանն առնչվող զեկույց ընդունվել է 2011թ.: Վեհաժողովում ևս ընդհանուր ընկալումն այն է, որ Հայաստանում ժողովրդավարության զարգացման ուղին կայուն է: ԵԽ-ի հետ համագործակցության կարևոր բաղադրիչ է Հայաստան-ԵԽ Գործողությունների ծրագիրը, որի միջոցով կազմակերպությունը հետևողականորեն աջակցում է իր իրավասությունների ոլորտներում Հայաստանի բարեփոխումներին: Ներկայում ընթացքի մեջ է Հայաստանի համար թվով 4-րդ Գործողությունների ծրագիրը՝ 2019-2022թթ. համար:

2020թ. աշնանը Արցախի դեմ ռազմական ագրեսիայի ընթացքում և դրանից հետո, ԵԽ տարբեր մարմիններ, մասնավորապես Գլխավոր քարտուղարը, Նախարարների կոմիտեն, ԵԽԽՎ-ն, Մարդու իրավունքների հանձնակատարը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն, Ռասիզմի և խտրականության դեմ պայքարի հանձնաժողովը, իրենց իրավասությունների շրջանակներում հանդես են եկել հայտարարություններով, Հայաստանի նախաձեռնությամբ կազմակերպվել են քննարկումներ, ձեռնարկվել են գործողություններ պատերազմի հումանիտար հետևանքների վերացմանը ԵԽ ներգրավման նպատակով:

Առաջիկա տարիներին ԵԽ շրջանակներում սպասվում են խիստ կարևոր գործընթացներ, մասնավորապես՝ ԵԽԽՎ միգրացիայի, փախստականների և տեղահանված անձանց հանձնաժողովում պատրաստվող «*Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության հումանիտար հետևանքները*» թեմայով

զեկույցի ընդունումը ԵԽԽՎ առաջիկա լիագումար նստաշրջաններից մեկում, նոր իրողությունների պայմաններում *Չիրագովը և այլոք ընդդ. Հայաստանի* և *Սարգսյանն ընդդ. Ադրբեջանի* գործերով ՄԻԵԴ վճիռների կատարմանն առնչվող քննարկումները ԵԽ նախարարների կոմիտեում, *Հայաստանն ընդդ. Ադրբեջանի* և *Ադրբեջանն ընդդեմ Հայաստանի* միջպետական գործերի քննությունը ՄԻԵԴ-ում:

«Ահաբեկչության կանխարգելման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը ստորագրման համար բացվել է 2015թ. հոկտեմբերի 22-ին և Հայաստանն Արձանագրությունը ստորագրելու հնարավորություն է ստացել որպես «Ահաբեկչության կանխարգելման մասին» ԵԽ կոնվենցիան ստորագրած պետություն: «Ահաբեկչության կանխարգելման մասին» ԵԽ կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2016թ. դեկտեմբերի 1-ին:

«Ահաբեկչության կանխարգելման մասին» ԵԽ Կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության նպատակն է լրացումներ կատարել «Ահաբեկչության կանխարգելման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի դրույթներում՝ կապված սույն Արձանագրության 2-6-րդ հոդվածներում նկարագրված գործողությունները քրեականացնելու հետ, այդպիսով ամրապնդելով Կողմերի՝ ահաբեկչության կանխարգելմանը և մարդու իրավունքներից, մասնավորապես՝ կյանքի իրավունքից լիարժեք օգտվելու վրա դրա ունեցած բացասական ազդեցությանն ուղղված ջանքերը՝ թե' ազգային մակարդակով ձեռնարկվող միջոցներով, թե' միջազգային համագործակցության միջոցով՝ համաձայն Կողմերի միջև գործող կիրառելի բազմակողմ կամ երկկողմ համաձայնագրերի կամ պայմանագրերի:

Արձանագրության վավերացման/հաստատման արդյունքում, Հայաստանում կստեղծվի 24/7 կոնտակտային կենտրոն, որը կմիանա ձևավորված ազգային կոնտակտային կենտրոնների ցանցին, ինչը տեղեկատվության արագ փոխանակման հնարավորություն կտա, ինչպես նաև վավերացմամբ/հաստատմամբ Հայաստանը կամրողջացնի ահաբեկչության կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ ԵԽ գործող/առկա փաստաթղթերին միանալու գործընթացը:

Արձանագրության վավերացումը/հաստատումը ԵԽ կողմից կգնահատվի իբրև կարևորագույն դրական քայլ, լուրջ առաջընթաց ահաբեկչության դեմ պայքարի միջազգային ջանքերին համահունչ գործելու առումով, կամրապնդվի Հայաստանի վարկանիշն իբրև իր պարտավորությունները, ԵԽ չափորոշիչները, ինչպես նաև ժամանակակից մարտահրավերներին դիմագրավելու միջազգային ջանքերը հարգող ԵԽ անդամ պետություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2015 թվականի հոկտեմբերի 22-ին ստորագրված «Ահաբեկչության կանխարգելման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության վավերացումը կամ հաստատումը Հայաստանի

Հանրապետության վարած արտաքին քաղաքականության առումով նպատակահարմար է:

**ՀՀ արտաքին գործերի**
**նախարարի տեղակալ**

14.07.2021

X

ԱՐՄԵՆ ՂԵՎՈՆԴՅԱՆ

Подписано: GHEVONDYAN ARMEN 3014710067 **Արմեն Ղևոնդյան**